ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« » 2023թ. N -Ն

ՄԱՐՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ, ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԿԱՄ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՍՊԱՅԱԿԱՆ, ԵՆԹԱՍՊԱՅԱԿԱՆ ԵՎ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԵՐԻ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՇՎԱՐԿՎՈՂ ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 61-րդ հոդվածի 18.1-ին և «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» 16-րդ հոդվածի 5.1-ին մասերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Սահմանել մարտական խնդիրների իրականացման, պլանավորման կամ վերահսկման գործառույթներ ունեցող պաշտոններ զբաղեցնող պայմանագրային զինվորական ծառայության սպայական, ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողներին ատեստավորման արդյունքներով հաշվարկվող հավելավճարի չափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սահմանել, որ՝

1) սույն որոշմամբ սահմանված հավելավճարները՝ ըստ մարտական խնդիրների իրականացման, պլանավորման կամ վերահսկման գործառույթներ ունեցող պաշտոններ զբաղեցնող պայմանագրային զինվորական ծառայության սպայական, ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողների

ատեստավորման արդյունքների, սահմանվում են յուրաքանչյուր տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը նախատեսված աշխատավարձի ֆոնդի սահմաններում.

2) մարտական խնդիրների իրականացման, պլանավորման կամ վերահսկման գործառույթներ ունեցող պաշտոններ զբաղեցնող պայմանագրային զինվորական ծառայության սպայական, ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողների ատեստավորման արդյունքներով հավելավճարը վճարվում է ատեստավորման օրվան հաջորդող ամսվա 1-ից.

3) հավելավճարների վճարումն իրականացվում է պայմանագրային զինծառայողների դրամական ապահովության վճարման հետ միաժամանակ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության

վարչապետ Ն. Փաշինյան

2023 թ.

Երևան

Հավելված

ՀՀ կառավարության

2023 թվականի -ի N -Ն որոշման

ՄԱՐՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ, ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԿԱՄ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՍՊԱՅԱԿԱՆ, ԵՆԹԱՍՊԱՅԱԿԱՆ ԵՎ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԵՐԻ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՇՎԱՐԿՎՈՂ ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ

դրամ

Հ/h	Զինվորական պաշտոնների խմբերը՝ ըստ խմբային համարակալման և զինծառայողների կազմերի		Հ
1		Բարձրագույն սպայական	4
2			4
3	1		4
4	2		4
5	3		4
6	4		4
7	5		4
8	39	Ավագ սպայական	4
9	38		4
10	37		4
11	36		4
12	35		4
13	34		4
14	33		4
15	32		4
16	31		4
17	30		4
18	29		4
19	28		4
20	27		4
21	26		4
22	25		4
23	24		4
24	23		4
25	22		4
26	21		4
27	20		4
28	19	Կրտսեր սպայական	4
29	18		4
30	17		4
31	16		4
32	15		4
33	14		4
34	13		4
35	12		4
36	11		4
37	10		4
38	9 / 5	Ավագ ենթասպայական	2
39	9 / 4		2
40	9 / 3		2
41	9 / 2		2
42	9 / 1		2
43	8 / 6		2
44	8 / 5		2
45	8 / 4		2
46	8 / 3		2

47	8 / 2		2
48	8 / 1		2
49	7 / 3	Կրտսեր ենթասպայական	2
50	7 / 2		2
51	7 / 1		2
52	6 / 5		2
53	6 / 4		2
54	6 / 3		2
55	6 / 2		2
56	6 / 1		2
57	5 / 5		2
58	5 / 4		2
59	5 / 3		2
60	5 / 2		2
61	5 / 1		2
62	4 / 4	Շարքային	2
63	4 / 3		2
64	4 / 2		2
65	4 / 1		2
66	3 / 6		2
67	3 / 5		2
68	3 / 4		2
69	3 / 3		2
70	3 / 2		2
71	3 / 1		2